695 Նոյը վերեն առավ հրաման՝

1. Նոյը վերեն առավ հրաման՝
Ծինելու փրկության տապան,
Եվ մեկ դար էր կաղերսեր
մարդկանց.
- Տիեզերքի Տերը արդար
Ջուրով պիտի դատե աշխարհ:
Միշտ կաղերսեր Նոյն անդադար:
- Դարձե՛ք առ Աստված,-
Կաղերսեր Նոյը մարդկանց:
- Դարձե՛ք առ Աստված,
Ծուտով դուռը կգոցվի,
Դե, մտե՛ք տապան:
Կաղերսեր Նոյը,
- Վերջին ժամն է ու վերջին
վայրկյան:
Ամ՛խ, շտապեցե՛ք, դարձե՛ք
Փրկչին,
Այսօր է առիթը վերջին:
Տապանի դուռը հավերժ
կգոցվի,
Վերջին ժամն է ահա ու
վերջին վայրկյան,
Նոյը կաղերսեր, որ մտնեն
տապան:

2. Այսօր կանչում է բոլորին,
Աստված՝ մարդկանց որդիներին,
Որ ընդունեն Փրկիչ Հիսուսին:
Հիսուսով է փրկությունը,
Մտնենք Աստծո օրհնյալ տունը,
Որ չուշանանք, չփակվի դուռը:
Հիսուսն է դուռը
Փրկության սուրբ տապանի,
Հիսուսն է դուռը
Երկինք տանող տապանի:
Հիսուսին դարձեք, էլ մի՛
ուշացեք,
Ով ներս մտնի, նոր կյանք
կգտնի:
Ամ՛խ, Հիսուսը սրտիդ դռան
Կանգնել է ու կթակե այն,
Այսօր է ժամը, ժամը
փրկության:
Հիսուսն է կանչում
փրկության տապան.
«Վերջին ժամն է ու վերջին
վայրկյան»: